

կարող լինել: Ուստի և չորրորդ դարի յիշատակարանների արձանագրութիւնքն, որոնք խօսում են ազատ արհեստաւորների վերայ, պէտք է հասկանալ այնպէս, որ այս արհեստաւորներն էին կամ ազատութիւն ստացածներ և կամ ազատ ծնած արհեստաւորներ, որոնք կառավարում էին հարուստների ստրկաց արհեստանոցները: Ստրկի մէջ ամեն ինչ մարդկային այնպէս ոչնչացրած էր, որ ստրկին անձն չէին համարում այլ լոկ գործարանի աշխատող ոյժ, որպիսի գործիչնակ մենք համարում ենք գոլորշին:

(Շարունակել)

ԽՈՐԵՆՇՈՒ ՊԸՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

Պատմութեան բնագրի Թարգմանութեան ենթարկուիլ, — կունդ Արամազդ. — սեաւ կէտադրութիւն. — քերականական սխալներ:

Խորենացու պատմութեան գիրքը մեր ամբողջ գրականութեան մէջ բացառիկ և արտօնեալ տեղ ունի գրաւած: Հայկական միտքը երբեք չէ արտայայտուել այնպիսի կորովութեամբ և այնպիսի վայելուչ արուեստով, ինչպէս այդ եղել է պատմահօր գլուխ — գործոցում: Աւստի հայկական մտքի և ոչ մի արտայայտութիւն չէ գրաւել լուսաւորեալ աշխարհի լուրջ ուշադրութիւնը այն չափով, ինչ չափով այդ բանին արժանացել է Խորենացին: Բազմաթիւ Թարգմանութիւններ զանազան լեզուներով, քննադատութիւններ, դեր և դէմ կարծիքներ, անթիւ ծանօթութիւններ, ուսումնասիրութիւններ և ենթադրութիւններ իրենց նիւթ են ունեցել Խորենացու ամբողջ երկասիրութիւնը, կամ նորա այս կամ այն հատուածը:

Ե. յսուամենայնիւ, մեր կարծիքով, Խորենացու ուսումնասիրութեան գործը ոչ միայն դեռ վերջացած չէ, այլ, համարձակութիւն չլինի ասել, դեռ նոր է սկսում: Իւրովսանն օգնել այդ մեծ գործին, թէև նուազ և աննշան չափով, ամեն մի գրագիտի բաղձալի է և, կարծեմ ներքի ցանկութիւն: Ե. յ. ցանկութիւնն ես էլ ունեցայ և ահա, այժմ, մի շարք միմիանցից անկախ, ինքնուրոյն յօդուածներով կամենում եմ հաղորդել մեր հին մատենագրութեամբ հետաքրքրուող ընթերցողներին իմ՝ մօտ մի տարուայ ուսումնասիրութեանց արդիւնքը:

Նախագէտ խնդրում ենք ընթերցողին նայել այս յօդուածներին իրեն
 թելթել ստուերագրերի (էզերիս) վրայ՝ որովհետեւ Խորենացու աժ-ը-լ-ում
 ուսումնասիրութիւնը ոչ միայն գերի վեր է մեր թղլ ուժերից՝ այլ և
 վաղաժամ :

Խորենացու երկասիրութիւնը լաւ ուսումնասիրուելու համար դեռ կարօտ է մեծ նախապատրաստական աշխատութեանց և մանրակրկիտ հետազոտութեանց: Խորենացու հիւժեւագիրներ մինչև այժմ չեն գտնուել՝ եղածներն էլ խնամքով չեն ուսումնասիրուած: Բաբելը, Էթէ - և Եթէ, Բաշա - Է - Բաշ, Է, Իսկ առանց ճիշտ կամ ըստ կառելւոյն ճշտուած բնագրի միւս այլ տեսակ բոլոր աշխատասիրութիւնները՝ մեկնութիւն, ստուգաբանութիւն, թարգմանութիւն, քննադատութիւն շատ անգամ կորցնում են իրենց ամենահաստուն հիմքը:

Այս ամառ ես բաղդ ունեցայ պ. Նիկ. Մառի *) Հետ միասին համեմատել Խորենացու մի նոր ձեռագիր, բոլորագիր, մագաղաթեայ և անթուական: Այս համեմատութեան հետևանքի և արդիւնքի մասին կհրատարակե պ. Մառը, իսկ ես կօգտուիմ այս համեմատութիւնից միայն այն դէպքերում, երբ այդ կարեւոր կլինի իմ այս կամ այն ենթադրութեանց կամ կարծիքների հաստատական ապացոյց գտնելու համար:

Բնաբերել խորհրդանշական ենթատեքստերը։ Մինչև այժմյան յայտնի էին Խորենացու պատմություններն այս կամ այն բառի զանազան ընկերքներով, որոնցից մեկը կամ միւսը ընտրելի էր համարում, նայելով թե որն աւելի հասկանալի էր և համապատասխանում էր ընդհանուր մտքին։ Մեր համեմատած նոր ձեռագիրը, որն իւր գրչի անունով կանոնանք «Ներսէս գրչի օրինակ», դրապէս ապացուցանում է մի նոր և անսպասելի երեւոյթ, այն է՝ որ Խորենացու քննարկում ենթադրուել է ծայրէ ծայր, երբեմն բացակայել էր նախնական ենթադրուելու, խորհրդանշական։ Այս ծանրակշիռ երեւոյթի շարք և ընդարձակութիւնը դեռ ևս դժուարին է որոշել միմիայն՝ Ներսէս գրչի օրինակով։ Բայց փաստը մնում է փաստ և որի մասին գաղափար ապագա համար մեջ բերենք մի քանի օրինակներ։

Տպագիր (Տփլիս, 1881)։ «Կատարել ղկամն ցանկութեան նորա և դառնալ մեծաւ ուրբէի և խաղաղութեամբ ի տեղի իւր»։ Ա. 15.

Ներս. Գրիշ. «Կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ
դուռնութիւն և խաղաղութեամբ ի տեղի իւր»:

Տպագ. «Եւ յեդնոյ» ըզձալի ինքն և ժամանակ իւր: (Ա. 24)

Տպագ. «Եւ խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր զհարցուածս»։ (Ա. 25)

2եռագ. «Եւ յոգիւնսն իւրոց անդուլ առնէր զհարցուածս»։

Տպագ. «Եւ յոգիւնսն իւրոց անդուլ առնէր զհարցուածս»։ (Ա. 28)

2եռագ. «Եւ հոգիւնսն իւրոց անդուլ առնէր զհարցուածս»։

Տպագ. «Միհրան առաջնորդ վրաց»։ (Գ. 6)

2եռագ. «Միհրան գլխավոր վրաց»։

Տպագ. «Զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգ-

րանայ ի պատանին Միհրանս իւրեքն իւրեքն առնէր որդի»։

2եռագ. «Զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգ-

րանայ ի պատանին Միհրանս իւրեքն իւրեքն առնէր որդի»։

Տպագ. «Զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգ-

րանայ ի պատանին Միհրանս իւրեքն իւրեքն առնէր որդի»։ (Բ. 18)

2եռագ. «Զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգ-

րանայ ի պատանին Միհրանս իւրեքն իւրեքն առնէր որդի»։

Տպագ. «Թողով զթագաւորութիւնն Պարսից որդւոց իւրում Արշաւրի

նէր իւր ժողովն առնէր իւրեքն իւրեքն»։ (Բ. 24)

2եռագ. «Թողով զթագաւորութիւնն Պարսից որդւոց իւրում Արշաւրի

նէր իւր ժողովն առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Եւ ի մէջ այսպիսեաց խառն երազոց, թուէր ինձ կալ ի վե-

րայ տանեաց իմոց արքունեացս և զնոյն ինքն վերին երես-

յարկացս տեսանել իւրեքն իւրեքն և բաւական շատրուանօք զարդա-

րեալ»։ (Ա. 26.)

2եռագ. «Եւ ի մէջ . . . գեղեցկօք բազմագունիք զարդարեալ շա-

տրուանօք»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։ (Ա. 26.)

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

Տպագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

2եռագ. «Ուստի և ի քրտան առնէր իւրեքն իւրեքն»։

նոյնպէս բնագիրն է՝ Ոչ զիւրն կարծելով քեռորդի՝ իսկ թարգմանութիւն է՝ չկարծելով ինքեան քուեր որդի։ Բնագիրն է «գլխապետ» իսկ թարգմանութիւն է «առաջնորդ»։

Ընդհանրապէս բնագիրը կարելի եղածին չափ ճշտելուն մեծապէս նպաստելու է այս Բաբելոնական Ենթակուծութիւնը գիտնալը։ Ամենամեծ ուշադրութիւն պէտք է դարձնել Խորենացու բոլոր այն բառերի և ոճերի վրայ՝ որոնք ուրոյն կամ լաւ ևս ինքնուրոյն գործածութիւն ունին։ Այս բառերի և ոճերի ուսումնասիրութիւնը միայն կարող է անսրբալ առաջնորդել մեզ ուղղագոյն ընթերցողածնեթի ընտրողութեան գործում։

Օրինակ վեր առնենք «բովանդակ» և «բաւական» բառերը։ Խորենացիներկուսն էլ գործ է ածում սովորական նշանակութեամբ։ Բայց Խորենացին ունի «բովանդակի» մի աւելի հին վաղնջական գործածութիւն։ Բովանդակը սովորաբար նշանակում է հաշիւ, ընդհանուր, միջոց։ Բայց Խորենացին ունի և այսպիսի գործածութիւն։ Այս վան այսորիկ այս չափ բովանդակ լիցի ասել (Ա. 10)։ Այս դէպքում «բովանդակ» նշանակում է հաշիւ, ASSEZ, ДОВОЛЬНО։ Միանգամ իմանալով բովանդակի այս վաղնջական գործածութիւնը, շատ հատուածների թարգմանութիւնը հեշտանում է։

Հետեւեալ օրինակում ակներև է, որ Բաբելոնական թարգմանութիւն է «բովանդակ վարկուցեալ մնացելոց սահմանացն տիրել» (Գ. 8)։ Բնագրում անշուշտ բովանդակ էր և ոչ բաւական, թէև երկուսի նշանակութիւնն էլ միևնոյն է։ Հ. Խ. Ստեփանէ (աշխարհ. խորեն. ծնթ. 566.) ընտրելի է համարում «բաւական» ընթերցուածը, երևի միայն այն պատճառով որ այս բառն աւելի հաշիւն է։ Բայց հասկանալիութիւնը բաւարար պատճառ և հիմունք չէ։ Բովանդակի վաղնջական գործածութեան ահա և այլ օրինակ. «բայց պատահեն միմիանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարագագաթնիւ, որ այժմ ասի Կողոնիայ» և մտեալք ի միմեանս ձիգ ասպարիզօք միջոցացն, ամրանան երկղբին կողմանքըն Բաբելոն աւուրս (Բ. 4)։ — Կարելի է բերել և ուրիշ օրինակներ, բայց բաւականանանք այս չափով։

Թարգմանութեան ենթարկուիլը մի անօրինակ երևոյթ չէ մեր գրականութեան մէջ։ Հակառակ ուղղութեամբ՝ ուսմականից դէպի գրաբար փոփոխութեան օրինակ ունինք արդէն։ (Տես, Հանդէս ամսօրեայ, 1890 մայիս, եր. 105. «պատկեր տարբերութեանց երկուց ձեռագրաց»)։ Համոզուած եմ որ ապագայ ուսումնասիրութիւնները շատ նորանոր փաստեր պիտի բնձնեն մեզ, այս երևոյթն ապացուցանող։

Կարելի է Բաբելոնական թարգմանութիւնը մեծաւ մասամբ վերաբերում է

արտաբերին՝ — լեզուին, և ոչ ներքին բովանդակութեանը, Բայց կարող են պատահել դէպքեր, երբ թարգմանութիւնը սխալ է կատարուած կամ նպատակաւոր է (tendancieux, դիտաւորական)։

Այսպիսի դէպքերում սկզբնագիրը վերականգնելու խնդիրը սաստիկ դժուարանում է և բարդուում, և կամ, նոյն իսկ, անհնարին դառնում։ Խորենացու այսպիսի մի ասացուած՝ «բաւական լիցի ասացեալս վասն նորա», կարող է պատահել որ թարգմանական լինի, բայց որի բնագիրը դժուար չէ ենթադրել և գտնել, քանի որ ունինք և այսպիսի ասացուած՝ «Եւ վասն այսորիկ այսչափ բովանդակ լիցի ասել»։ Բայց երբ «թարգմանութիւնը» կամ փոփոխութիւնը նպատակաւոր է, օրինակ, մի հեթանոսական ասացուածի տրուած է քրիստոնէական կերպարանք, այսպիսի դէպքում բնագիրը վերականգնելը, կամ ընթերցուածների մէջ ընտրութիւն անելը սաստիկ դժուարանալու է։

Այսպիսի մի նպատակաւոր փոփոխութեան ենթարկուած է մեր կարծիքով Խորենացու մինչև ցայժմ մթին և անհասկանալի մնացած կտորներից մին, որ է Արամազդի հետեւեալ հատուածը.

«Սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ՝ քաջաց ազգք քաջքն. իսկ միջոքն՝ որպէս դէպ ումեք թուիցի կոչել, Բայց ըստ դիւցազնութեանն կարծեաց՝ ճշմարիտ է և ասելս մեր. ոչ Արամազդ որ, այլ ի կամեցողսն լինել Արամազդ, չորից ևս այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և Կունդ ոմն Արամազդ։ Այսպէս և բազումք անուանեալ Տիգրանք, մի է և միայնակ սա ի Հայկազանցս, որ զԱժդահակ սպան, և զտուն նորա ի գերութիւն վարեաց, և զԱնոյշ մայրն վիշապաց։ օժանդակ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելով։ զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» (Ա. 31)։

Այս ամբողջ պարբերութեան մէջ մի բան շատ որոշ է, այդ այն է՝ որ համեմատուած են միմեանց հետ Արամազդներն ու Տիգրանները, Ինչպէս որ չորս Արամազդից միայն մինն է Կունդ Արամազդ, այսպէս և «բազում» Տիգրաններից մի և միայնակն է Տիգրան Հայկազունը, որ Աժդահակին սպանեց, Անոյշ տիկնոջը գերեց, Մարաց և Պարսից իշխանութիւնները յափշտակեց, Արամազդ և Տիգրան այնպէս սերտ կապակցուած են բաղդատութեամբ, որ անկարելի է նրանց անջատել առանց ամբողջ պարբերութիւնն աղջատելու, ուստի և սխալուում են ֆրանսիացի թարգմանիչը՝ Լանգլուան, և նորանից առնելով՝ Հ. Ստեփանէն, Արամազդիկտորը համարելով յետոյ ներմուծուած — interpollation, ընդմիջարկութիւն։

Պարբերութեան ընդհանուր միտքը, ըստ մեր կարծեաց, շատ պարզ է. մութն է մնում և անվերծանելի Կունդ բառը, որ գրում են իբրև յա-

տուկ անուն: Իտալական Թարգմանիչը պարսկերենով մեկնում է կունդը իբրև «հզօր, պատերազմասեր»: «Cund nel persiano val forte bellicoso *): Էմինն ուղղակի խոստովանում է, որ չէ հասկանում կունդ բառը, որը մի ուրիշ տեղում չէ հանդիպում: Կունդը իբրև «հզօր կամ գլխաւոր, շատ յարմար է գալիս պարբերութեան ընդհանուր մաքին. — Արամազդեերի մէջ կունդ Արամազդը, ինչպէս Տիգրանների մէջ՝ Տիգրան Հայկազունը:

Բայց թէ ի՞նչ պարսկական բառից է առնում իտալերենի Թարգմանիչը այդ կունդի մեկնութիւնը, յայտնի չէ, ուստի և կասկածելի: Եւ միթէ Հայոց մեծ Արամազդը, չորս Արամազդներից մեծագոյնը, կրօն էր մի այնպիսի մակդիր, ստորոգելի, որ հայերենում չունէր իւր նշանակութիւնը և այսօր մեզ անհասկանալի է մնում:

Այս մտածութեամբ առաջնորդուած մենք կունդի մէջ տեսնում ենք հայերէն բառ, մինչև այսօր էլ ժողովրդեան մէջ գործածական: Կունդ նշանակում է մազերը թափուած գլուխ, քալ, քաջալ, ճաղատ, կնդակ, Կնտել նշանակում է՝ մազերը տակից խուզել: Սրանից է երևի և կնդ (բլուր) բառը, իբրև խիտ, որի մասին մենք խօսելու ենք մի այլ անգամ: Եզել են և կան կունդ մականուն կրողներ: օրինակ՝ Կունա Սարգիս վարդապետ, որ գրած է Ղուկասու և Յովհաննու աւետարանաց մեկնութիւն, Սարկաւագ վարդապետի աշակերտը:

Բայց կունդ, կնդակ կոչել Արամազդին կարելի էր, միայն անարգական մաքով: այնպիսի անարգութիւն, որին չդիմացաւ մինչև անգամ այրն աստուծոյ: Եղիսէ մարգարէն, և անտառից երկու արջ կանչեց և իրեն կնդակ կոչող մանրիկ մանուկներից քառասուն և երկուսին պատահել տուեց: (Դ. Թագ. գլ. Բ.):

Կունդի այս բացատրութիւնը հակասում է ամբողջ պարբերութեան մաքին, որի մէջ Արամազդը ոչ միայն չէ անարգուած, այլ համեմատուած է սիրելի հերոսի՝ Տիգրանի հետ:

Այս ակներև հակասութեան գաղտնիքը պէտք տեսնել չէր որոշուի: Ինչպէս թուէր, մէջ, որի մասին խօսեցանք վերևում: Արամազդի պատուաբեր և մեծարական ստորոգելին կարող էր թարգմանուել անարգական բառով, քրիստոնէայ և ներհայեաց ընդօրինակողից, կամ Խորեանցի մեկնող վարժապետ — վարդապետից: Եւ յիշուի, ներքէն գրեջը ապրիս է մի նոր ընթերցուած, որ լիովին ապացուցանում է մեր այս վարկածը: «Կունդ, ոմն Արամազդի, փոխանակ ներսիս օրինակն ունի»՝ «Կա-

*) Mose Corenese. Venezia, 1850 p. 84. n. 1.

տար ամեն Արամազդը, Ներսէս սաստիկ ազէտ գրիչ է, կամ աւելի ճիշտ
ասած, նա ոչ թէ ընդօրինակում է, այլ առանց հասկանալու նիւթ է
գրերը, ուստի և անկարող է որևէ ինքնուրոյնութեան, իսկ ընդօրինակած
է անկասկած, ինչպէս բաղմամբիւ նշաններից երևում է, երբեք ոչ ոք
չէ, առանց իւր կողմից որևէ փոփոխութիւն անելու իւր-իւրին ունե-
նալու: Այս բոլորը մեզ գրաւական են, որ սկզբնադրութեան եղել է «կա-
տար» և ոչ թէ «կունդ»: Եւ կունդն ի՞նչ է, թէ ոչ կատարի անարդա-
կան թարգմանութիւնը: Խորենացու բարեպաշտ մեկնիչ վարդապետը չէ
կամեցել չաստուած Արամազդին անուանել «կատար», զլուխ, ուստի և
կոչել է՝ քաջալ — զլուխ այն է՝ «կունդ», թէև այս կամայական փոփո-
խութեամբ յետագայ սերունդների համար անվերձանելի էր դառնալու մի-
ամբողջ պարբերութիւն:

Թէ այս տեսակ մի «թարգմանութիւն» հնարաւոր էր Խորենացու մէջ,
այդ մենք տեսանք վերելում, ուր ցոյց տուինք որ ոչ միայն բառեր,
այլ ամբողջ նախագասութիւններ ենթարկուել են միեւնոյն գործողու-
թեանը:

Մնում է խօսել մի փոքրիկ տարբերութեան վրայ: Ներսէս գրիչն
ունի ոչ թէ «կատար ոմն», այլ «կատար ումն» և այսպէս հետու հետու
գրուած: Ուրեմն և կարելի է կարգալ և «կատար ոմն Արամազդ» և «կա-
տարումն Արամազդ»:

Մի բան միայն ակներե է, որ «կունդ ոմն» փոփոխողը կարգացել է
«կատար ոմն»:

Ըստ մեզ կարող էր լինել և «կատարումն Արամազդ», իբրև «լրումն»,
«կատարեալ», այլ և իբրև՝ «խնդրուածոց կատարող Արամազդ»: Աստուա-
ծածնի մակդիրներ ունինք՝ հաճկատար, կամակատար, խնդրակատար,
և այլն, և այլն: Այդ մակդիրները շատ հին են: Ըստիւրամ աստուածների-
անուանում է «հեշտացուցիչք և իմացորդ»: Այսպէս և հետևեալ հա-
տուածում. «Եւ այս (չար) . . . անկասկած զգլուխ ի վերայ ուսոց
Բիւրասպեայ գնելով և խօսելով յականջն՝ ուսուցանէր զանբարի արուես-
քն, զոր յառասպելին մանուկ սատանայի ասեն*», և սպասաւորելով լի-
նէր իմացորդ (ի պարօից առասպել. Բ.):

Այսպէս կամ այնպէս մի բան ակներե է, որ «կունդ» «կատարի»
թարգմանութիւնն է. Իսկ «կատար ոմն» կամ «կատարումն» կարող էր

*) «Сынъ діавола» «Թարգմանիչները վատ են թարգմանել. որդի սա-
տանայի. Сынъ діавола, il figliuol di satana, le fils de satan և այլն, «Մանուկի-
մասին մի ուրիշ տեղում»:

ունենալ ոչ միայն Իսկ—հի նշանակութիւն, այլ և մի տեսակ բառախաղ լինել «կամեցողի հետ»։ Ոչ Արամազդ դք, այլ ի Իսկ—հի լինել Արամազդ, չորից ևս այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և Իսկ—հի Արամազդ» *) :

ԿԻՒՐԵՐ—ԲԵՆԷ Ե ԿԵՒՆԷՐ—ԻՆԷՐ

Բնագրի Թարգմանութեան ենթարկուելու ծանրակշիռ իրողութիւնը հաւաստելուց յետոյ չենք կարող առանց ուշադրութեան թողնել այն աղաւաղումները, որոնք սպրդել են բնագրի մէջ սխալ կէտադրութիւնից և աւելորդ նախդիրներինց։ Մեզ յաջողուեց ուղղել հետեւեալ աղջատումները։ Տպագիր. «Եւ զի՛նչ լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մեռանել և ապա լինել ԶԻՒՆԷ ի վերայ Արեաց, և զաստուածուհեաց ունել զտեղի։ Բայց արդ ընտրելի է քեզ այժմ զի՛ յայսցանէ կամ լինել եղբայրասէր և կործանումն խայտառակելի յանգիման Արեաց յանձն առնուլ, և կամ զանձին իմանալով զբարի՝ խորհուրդ օգտակար ի մէջ բերել և յաղագս առաջիկայիցն հոգալ» (Ա. 29) :

Այս պարբերութեան մէջ պարզ է որ երկու անուն—բայի կայ հայցական հոլովով, ընդդէմ քերականական տարրական կանոնների, ներսէս գրիչը տալիս է ուղիղ ընթերցուած. «Եւ զի՛նչ լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մեռանել և ապա լինել ԶԻՒՆԷ ի վերայ Արեաց, և զաստուածուհեաց ունել զտեղի։ Բայց արդ ընտրելի է քեզ այժմ Ի՛ յայսցանէ կամ լինել եղբայրասէր և կործանումն . . . և այլն և այլն» :

Աւելորդ զայ նախդիրը ներս սպրդած պէտք է լինի ԶԻՒՆԷ— սկզբնագիր զայի պատճառով, ևին ձեռագրերում տողադարձը կատարուած է ոչ վանկերի տրոհմամբ, այլ տառերի։ Մի գիր անգամ կարող է տողի վերջում մնալ, և լուռի մնացած գրերը կարող էին անցնել միւս տողը։ Բաւական էր որ անուշադիր գրիչը Զարուհու զան կրկներ, գրելով այդ տառը մի անգամ տողի վերջում և նոյնը կրկնելով հետեւեալ տողի սկզբում և կատարուէր զԶարուհի իսկ սրա և զաստուածուհեաց բառի հետեւութեամբ աւելացրած է և նոր զայ Ի՛ ի վրայ։

*) Ո՛յս հաստուածն էլ բոլոր Թարգմանիչները շատ վատ են Թարգմանել, Դենեք նորագոյն աշխարհաբար Թարգմանութիւնը։

«Զկայ ոյնիչ Արամազդ, բայց Արամազդ լինել կոմեցողների համար ուրիշ չորս անուանեալ Արամազդներ կան, որոնցից մին է Կունդ Արամազդը» :

Մինչդեռ, ըստ մեզ, պէտք է Թարգմանել այսպէս։

«Արամազդ կայ միայն կամեցողների համար եւ չորս (սյլ եւ սյլ) Արամազդներից մէկն է միայն Կունդ (կատար) Արամազդը» :

Թարգմանիչների սխալն էր ուղղելը շատ Ժամանակ կեւելք մեղմոյից եւ յօգուածը կերկարացնէր, ուստի եւ սյգ զտեց արինք։

Խորենացու մէջ բաւական շատ տեղեր հանդիպում ենք այնպիսի քերականական խորթութեանց և բացառութեանց, որոնք բացատրելու համար ուղիղ ճանապարհն է ամեն ջանք գործ դնել Բէ-բէ-բէ Գրականութիւն և ոչ թէ ստեղծել քերականական բացառիկ կանոններ այս կամ այն խորթութիւնը, շատ անգամ առաջ եկած գրչի սխալից, ոչ միայն մեկնելու, արդարացնելու, այլ և այդ վրիպակները սրբագործելու համար:

Ահա և երկու պարբերութիւն աղաւաղուած սխալ կէտադրութեամբ.

Տպագիր. «Յարմարեալ զամենայն կարգեցից քեզ ի գիրս յայտոսիկ զազիս մերոյ զաւագագոյն զբոս և զնախնիս, և որ ինչ վասն սոցա զրոյցք և իրակութիւնք, ոչ ինչ կամամտածական և ոչ ինչ անպատշաճ ի սմա յարմարելով բան, այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի բանից արանց իմաստնոց և յայտոսիկ քաջախոհակաց, յորոց մէք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս» (Ա. 19):

Տպագիր. «Իսկ որ ինչ զկրի մահուանն Խոսրովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի Ժամանակս անիշխանութեանն պատմէ, ստոյգ համարելով երկրորդեմ համառօտ բանիւք, Բայց որ ինչ և ի թագաւորութեանն Տրդատայ և յետ նորա, ոչ հեղգութեամբ և անցգուշաբար վրիպեալ, և ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մատենիցն Յունաց, Իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զըուցեցաք» (Բ. 75):

Ընթերցողների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս երկու հատուածի վերջին պարբերութեանց վրայ, որոնք սկսւում են «իսկ ըստ նմանեացն» բառերով: «Իսկ» - ով սկսւած պարբերութիւնները չեն Գրականութեան են երևում, նրանց պակասում է բայը, Բայց Թերի համարել այդ պարբերութիւնները շատ դժուար է, քանի որ երբեմն էլ «իսկ» բառը, անջատուած լինելով միմիանցից 89ը գլխով: Մանաւանդ որ երկրորդ օրինակի վերջին պարբերութիւնը է միանգամայն և գլխի վերջը:

Երկու հատուածն էլ միատեսակ կարգադրւին, նրանց Թերութիւնը կանհետանայ, լրացուցիչ բայի կարօտութիւն չի զգացուիլ այլ ևս, եթէ կէտերը տեղափոխենք այսպէս՝ զնելով իսկ - ի առաջի միջակէտը և վերջակէտը «իսկ» ից յետոյ. «ոչինչ կամամտածական և ոչինչ անպատշաճ ի սմա յարմարելով բան, այլ որ ինչ ի գրոց» իսկ - ըստ նմանեացն ապա և որ ինչ ի բանից արանց իմաստնոց...

— Այն կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մատենիցն Յունաց, իսկ - ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զըուցեցաք:

Այս կռակա վրիպակները ծագել են «իսկ» բառի երկու նշանակութեանց շփոթութիւններից և այսչափ երկար դարերով դիմացել են բազմաթիւ ընդօրինակողների, հրատարակիչների, համեմատողների, թարգմանիչների քննադատների փորձիչ և հետախուզող ակնարկներին։ «Իսկ» փոխանակ հասկացուելու «բուն» ի մտքով այն է՝ «բուն գրքերից» կամ «խփուն մատեաններից»։ Հասկացուել է իբրեւ «բայց» որով և կետագրութիւնը շեղուել է, շեղուել է և ամբողջ պարբերութիւնը։

«Իսկ» ի սխալ ըմբռնութից առաջացած նմանօրինակ մի սխալ կայ և առաջին դիրք առաջին գլխում, բայց այդ արդէն ուղղուած է Աննակիր 1881 - ի Խորենացու հրատարակութեան մէջ։

ՄԻԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՔԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԿԻՐ

Ռուսաց «Моск. перк. Вѣд.» Կանդէսը զարթեցնում է խնդիր «Լեւոնդա-դադական» — Լեւոնդադական նկարագրութեան և որոն հետք է նշու խորհուրդ և հիմաւոր մշակման մասին։ Ամենից առաջ, ասում է լրագիրը, անհրաժեշտ է այս խնդրի յաջողութեան համար եկեղեցական դասի կատարեալ համակրութիւնը գործին և ընդ նմին նորա եռանդուն գործակցութիւնը։ Բայց դորա համար ցանկալի էր, որ եկեղեցականը զբաղուէին առանձին քաղաքների, գիւղերի, տաճարների, մատուռների, հրաշագործ պատկերների և այլ եկեղեցական — հնախօսական նկարագրութիւններով։ Յայտնի բան է, այսպիսի մասնաւոր նկարագրութիւնք ինքն ըստ ինքեան շատ մանրամասն կլինեն և յաճախ ունենում են տեղական նշանակութիւն, բայց այսպիսի նիւթերի գումարից թեմի ընդհանուր պատմագիրը կարող կլինի ընտրել այն, ինչ որ ամենքի համար է հետաքրքրական։ Եւ ո՞ւմ աւելի անկ է և վայել ասում է լրագիրը, զբաղուել այս նկարագրութիւններով եթէ ոչ եկեղեցական դասին։ Այս կամ այն եկեղեցու պատմութիւնն ում համար աւելի հետաքրքրական է քան թէ այն քահանայի համար, որին Տէրը նշանակել է պահապան և ծառայ այն եկեղեցւոյ։ Ո՞ւմ համար աւելի հետաքրքրական է մի ծխի պատմութիւնն, եթէ ոչ նորա հովուի համար, Եկեղեցւոյ և ծխի պատմական հետազոտութիւնը կարող է երբեմն և գործնական նշանակութիւն ունենալ (խնդիր հողային տիրապետութեան իրաւանց մասին), ուստի և իւրաքանչիւր ծուխ կատարեալ իրաւունք ունի սպասելու ծխական եկեղեցւոյ պատմութեան նկարագիրը նախ նորա քահանայից, և ապա նշոնպէս և նորա այլ պաշտօնեաներից։ Բայց գծադրարար եկեղեցականք, մանաւանդ գիւղական եկեղեցականք։